Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-023-17.09.2021-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆինանսական համահարթեցման մասին» 2016 թվականի հոկտեմբերի 20-ի ՀՕ-202-Ն օրենքի 18-րդ հոդվածի.

1. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի 6-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում և կիրառվում դոտացիաների՝ 2024 թվականի գումարները հաշվարկելու պահից սկսած:».

2. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. 2022 և 2023 թվականներին «ա» մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են՝
1) տվյալ համայնքին 2016 թվականին տրամադրված դոտացիաների փաստացի գումարի չափով (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի).
2) 2016-2023 թվականներին ձևավորված բազմաբնակավայր համայնքների՝ «ա» գործոնով նախատեսվող դոտացիայի գումարը հավասար է 2016 թվականի դրությամբ վերջիններիս կազմում ընդգրկված նախկին համայնքների դոտացիաների (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի) հանրագումարին:»

3. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. 2022 և 2023 թվականների համար «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Դ^{Ա} = Դ^{2016\ փաստացի}$$, որտեղ՝

$Դ^{Ա}$-ն - «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է,
$Դ^{2016\ փաստացի}$ -ն - 2016 թվականին համայնքների փաստացի հատկացված դոտացիաների (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի) ընդհանուր գումարն է:»

4. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. 2022 և 2023 թվականների համար «բ» մասով հատկացվող համահարթեցման դոտացիաների գումարը հաշվարկելիս համայնքի եկամտային կարողության գործակցի հաշվարկում չի ներառվում «ա» մասով հատկացվող դոտացիաների գումարը: 2022 և 2023 թվականների համար համայնքի եկամտային կարողությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԵԿ_i = ՀՀ_i + ԳՀ_i + ՄՀ_i + ՊՏ_i,$$ որտեղ՝

$ՀՀ_i$-ն - i-րդ համայնքի հողի հարկի գումարն է,
$ԳՀ_i$-ն - i-րդ համայնքի գույքահարկի գումարն է,
$ՄՀ_i$-ն - i-րդ համայնքի մասհանվող հարկերն են,
$ՊՏ_i$-ն - i-րդ համայնքի պետական տուրքերն են:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Ֆինանսական համահարթեցման մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2016 թվականի հոկտեմբերի 20-ի ՀՕ-202-Ն օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~ 18-րդ հոդվածի.

1. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի 6-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում եւ կիրառվում դոտացիաների՝ 2024 թվականի գումարները հաշվարկելու պահից սկսած:».

2. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. 2022 եւ 2023 թվականներին «ա» մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են՝

1) տվյալ համայնքին 2016 թվականին տրամադրված դոտացիաների փաստացի գումարի չափով (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի).

2) 2016-2023 թվականներին ձեւավորված բազմաբնակավայր համայնքների՝ «ա» գործոնով նախատեսվող դոտացիայի գումարը հավասար է 2016 թվականի դրությամբ վերջիններիս կազմում ընդգրկված նախկին համայնքների դոտացիաների (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի) հանրագումարին:»

3. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. 2022 եւ 2023 թվականների համար «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով.

$Դ^{Ա} = Դ^{2016\ փաստացի}$, որտեղ՝

$Դ^{Ա}$ -ն - «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է,

$Դ^{2016\ փաստացի}$-ն - 2016 թվականին համայնքների փաստացի հատկացված դոտացիաների (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի) ընդհանուր գումարն է:»

4. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. 2022 եւ 2023 թվականների համար «բ» մասով հատկացվող համահարթեցման դոտացիաների գումարը հաշվարկելիս համայնքի եկամտային կարողության գործակցի հաշվարկում չի ներառվում «ա» մասով հատկացվող դոտացիաների գումարը: 2022 եւ 2023 թվականների համար համայնքի եկամտային կարողությունը հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով.

$ԵԿ_i = ՀՀ_i + ԳՀ_i + ՄՀ_i + ՊՏ_i$, որտեղ՝

$ՀՀ_i$ -ն - i-րդ համայնքի հողի հարկի գումարն է,

$ԳՀ_i$ -ն - i-րդ համայնքի գույքահարկի գումարն է,

$ՄՀ_i$ -ն - i-րդ համայնքի մասհանվող հարկերն են,

$ՊՏ_i$ -ն - i-րդ համայնքի պետական տուրքերն են:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-023-17.09.2021-ՏՏԳՇ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Վերնագիր	**1.** Առաջարկվում է նախագծի վերնագրից հանել երկրորդ «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել և կատարվել է փոփոխություն նախագծի վերնագրում:	Ընդունվել է
2	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Առաջարկվում է նախագծի առաջին հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության» և «(այսուհետ՝ Օրենք)» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
3	ՀՀ կառավարություն	4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ պարբերություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով նախատեսված Օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելու պարբերությունը համարակալել:	Ընդունվել է	Ընդունվել է